ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԹԻՄԻ ՀԱՏՈՒԿ ՄԱՆԿԱՎԱՐԺ (ԼՈԳՈՊԵԴ, ՏԻՖԼՈՄԱՆԿԱՎԱՐԺ, ՍՈՒՐԴՈՄԱՆԿԱՎԱՐԺ, ՕԼԻԳՈՖՐԵՆԱՄԱՆԿԱՎԱՐԺ, ԷՐԳՈԹԵՐԱՊԻՍՏ), ՀՈԳԵԲԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺ

Մանկավարժահոգեբանական աջակցության խումբը աշխատում է ցանկացած աշակերտի հետ, ում մոտ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատմամբ պարզվել է այս կամ այն ֆունկցիայի որևէ աստիճանի խանգարում, որը դժվարացնում է, իսկ որոշ դեպքերում՝ գրեթե անհնարին է դարձնում աշակերտի կողմից իր ԱՈՒՊ-ով սահմանված տարեկան վերջնարդյունքներին և նպատակադրումներին հասնելը՝ առանց լրացուցիչ աջակցության ծառայությունների տրամադրման:

Մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամները սովորողների ԱՈՒՊ-ի մշակման, իրականացման ու գնահատման խմբի անդամներ են, ովքեր՝

- մշտապես տեղեկատվություն են տրամադրում ուսուցիչներին և ծնողին՝ սովորողի ուժեղ կողմերի և դժվարությունների մասին,
- մասնակցում են սովորողի մշտադիտարկման, ուսումնառության ընթացիկ, կիսամյակային ու տարեկան գնահատման գործընթացներին,
- պլանավորում և իրականացնում են հատուկ մանկավարժական, հոգեբանական և սոցիալ-մանկավարժական աջակցության ծառայություններ՝ գրառումներ կատարելով ԱՈՒՊ-ի համապատասխան բաժիններում,
- խորհրդատվություն և անմիջական օժանդակություն են տրամադրում ուսուցիչներին՝ «Հանրակրթության պետական չափորոշչով», առարկայական չափորոշիչներում ու ծրագրերում սահմանված բովանդակային նվազագույն պահանջները ԱՈՒՊ-ում պարզեցնելու և աշակերտի մտավոր և ֆիզիկական կարողությունների առավելագույն ներուժին հարմարեցնելու աշխատանքներում,
- խորհրդատվություն են տրամադրում ուսուցիչներին և ուսուցչի օգնականներին՝ կրթության համար անհրաժեշտ առանձնահատուկ պայմանների և ծրագրային հարմարեցումների, հատուկ մանկավարժական ռազմավարությունների և մեթոդների, նյութերի և ռեսուրսների ընտրության վերաբերյալ,
- որպես ընտանիքի համար հատուկ մանկավարժական աջակցության խորհրդատվական կարևորագույն ռեսուրս՝ տնօրինության համաձայնությամբ և հանձնարարությամբ կարող են իրականացնել սովորողի կրթությանը խոչընդոտող՝ հոգեբանական, սոցիալական և անհրաժեշտ աջակցության այլ ծառայություններ: